ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հեռ. (0262) 6-12-09
№_132-Ե._
25.12.2015թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ.
Կից ուղարկում ենք Ծակքար համայնքի ավագանու 14.12.2015թ. թիվ 16 նիստի նո. 49-54 որոշումները:

Ծակքարի համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

14.12. 2015թ.

Հեռ. (0262) 6-12-09 գ. Ծակքար

ՈՐՈՇՈՒՄ – 49

1. Ղեկավարվելով ՀՀ <ՏԻՄ> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի առաջին կետով գյուղապետարանի ճանապարհային տրանսպորտի 4251 հոդվածից 428,0 հազ. դրամ տեղափոխել նախադպրոցական կրթության ոլորտի 4241 հոդված մանկապարտեզի էլեկտրո համակարգի միացումը ընդհանուր ցանցին ապահովելու համար:
2. Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
3. Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աթոյանին:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Մ. Հակոբյան
3. Ա. Խաչատրյան
4. Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ – 50

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի և <Սոցիալական աջակցության մասին> օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի գյուղապետարանի սոց. ոլորտից տալ դրական օգնություն:

1 Օֆիկ Մխիթարի Մխիթարյանին - 30.000 (երեսուն հազար) դրամ
1. Վարազդատ Սարգսի Մանուկյանին - 30.000 (երեսուն հազար) դրամ
2. Թամարա Սամվելի Գևորգյանին - 30.000 (երեսուն հազար) դրամ
3. Բավական Հակոբի Ղուկասյանին - 30.000 (երեսուն հազար) դրամ
4. Ժորա Գևորգի Հակոբյանին - 30.000 (երեսուն հազար) դրամ
5. Վահագն Աբգարի Խաչատրյանին -150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ
6. Արամ Համլետի Այվազյանին - 140.000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ
7. Լևոն Եգորի Գալստյանին - 50.000 (հիսուն հազար) դրամ
8. Վարթիկ Սանթուրի Խաչատրյանին - 200.000 (երկու հարյուր հազար) դրամ

Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աթոյանին:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Մ. Հակոբյան
3. Ա. Խաչատրյան
4. Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ – 51

Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի ավագանին որոշեց

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար սահմանել տեղական տուրք հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդ. մակերես ունեցող և հասարակական ու արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ - 4.000 դրամ,

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 6.000 դրամ,

բբ) 501- 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 10.000 դրամ

բգ) 1001-ից ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 15.000 դրամ

Ոչ հիմնական շինություններ տեղադրելու համար՝

գ) մինչև 20 քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 500 դրամ,

դ) 20 և ավել քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 1.000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 500 դրամ,

բ) բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմեր.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թուլտվության համար՝ 1,500 դրամ,

4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1.000 դրամ,

բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1.500 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝ սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

բ) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար 150.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի կազմակերպման օբյեկտները աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար՝
   ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ,
   բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանել 500 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու տուրքը սահմանել 1.000 դրամ:

Ավագանու կողմ -4, դեմ-0, ձեռնպահ-0, որոշումն ընդունվեց:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Մ. Հակոբյան
3. Ա. Խաչատրյան
4. Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ – 52

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <Բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 34, 72 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին հաստատեց

1. Ծակքար համայնքի 2016թ. բյուջեի նախագիծը՝
   Եկամուտների գծով – 59884.5 ՀՀ դրամ
   Ծախսերի գծով - 59884.5 ՀՀ դրամ
2. Բյուջեի նախագծի մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել լիազոր մարմին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Ավագանու կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Մ. Հակոբյան
3. Ա. Խաչատրյան
4. Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ – 53

Ղեկավարվելով «Տեղական ինքնքկառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և 32-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին
Հաստատեց համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը թվով 14 միավոր, հաստիկացուցակը և աշխատակազմի դրույքաչափերը

1. Համայնքի ղեկավար, աշխատավարձը՝ ա/ժ պատգամավորի աշխատավարձի 56.4% աշխատավարձը --- 338,000 դրամ
2. Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատավարձը 240,000 դրամ
3. Հ/ ղ աշխ. քարտուղար - (1 - 2 - 1) -- ----// -------- 240,000 դրամ
4. Առաջատար մասնագետ - (3 - 1 - 1) -- ----// -------- 236,600դրամ
5. Առաջին կարգի մասնագետ - (3 – 2 – 2) -- ----// -------- 135,200 դրամ
6. Առաջին կարգի մասնագետ - (3 - 2 - 3) -- ----// -------- 135,200 դրամ
7. Տնտեսվար -- ----// -------- 120.000 դրամ
8. Օպերատոր ---------- // ------- 120.000 դրամ

9. Բակապահ -- ----// -------- 120.000 դրամ
10. Քարտուղար մեքենագրուհի, -- ----// -------- 93.000 դրամ
11. Կոմունալ աշխատող -- ----// -------- 113.000 դրամ
12. Ջրմուղագործ -- ----// -------- 93.000 դրամ
13. Ջրամբարի սպասարկող -- ----// -------- 93.000 դրամ
14. Հավաքարար -- ----// -------- 93.000 դրամ

Բոլոր աշխատողներին վճարել պետության կողմից սահմանված 20% բարձր լեռնային հավելավճարը :

Կողմ - 4, դեմ- 0, ձեռնպահ- 0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Մ. Հակոբյան
3. Ա. Խաչատրյան
4. Հ. Այվազյան

ՈՐՈՇՈՒՄ – 54

Ղեկավարվելով <ՏԻՄ> ՀՀ օրենքի 16 հոդվածի 26-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34 հոդվածով, 72 հոդվածի 1-ինմասի 1-ինկետի (ե) ենթակետով՝ հաստատել մշակույթի աշխատողների աշխատակազմի թվաքանակը թվով 5 միավոր, հաստիկացուցակը և աշխատակազմի դրույքաչափերը

1 Տնօրեն – աշխատավարձը՝ 94.000 դրամ
2 Հաշվապահ – աշխատավարձը՝ 91.000 դրամ
3 Գրադարանավար – աշխատավարձը 87.000 դրամ
4 Պահակ – աշխատավարձը՝ 87.000 դրամ
5 Հավաքարար -- աշխատավարձը՝ 87.000 դրամ

Բոլոր աշխատողներին վճարել պետության կողմից սահմանված 20% բարձր լեռնային հավելավճարը :

Ավագանու կողմ - 4, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան 3. Ա. Խաչատրյան
2. Մ. Հակոբյան 4. Հ. Այվազյան

Ծակքար համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Խաչատրյան